



ՀՎՀ-Ի ԱԿԱԴԵՄԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերը

ՑԱՆԿ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ	2
Ծրագրեր.....	2
Վկայական, դիպլոմ և մագիստրոսի աստիճան	2
Դիպլոմ	2
Մագիստրոսի աստիճան	2
Ընդունելություն.....	2
Կուրսային աշխատանքի և հետազոտության պահանջներ.....	3
Կրեդիտներ/ուսումնական ծրագիր ըստ մասնագիտացման	3
Մագիստրատուրա. խորհրդատվություն	4
Մագիստրոսական ատենախոսություն	4
Կրթաթոշակ մագիստրոսական ծրագրի դիմորդներին.....	4
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ.....	4
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	5
Խաբեություն	5
Գրագողություն.....	6
ՈՒՇ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....	6
Ուշ գրանցվելու կարգը.....	6
Դասընթացից հրաժարվելու կարգը	6
Մասնակցությունն ամբողջապես դադարեցնելու կարգը.....	7
Ուսման վճարի փոխհատուցում	7
Ուսանողի կարգավիճակի փոփոխություն	7
Դասընթացին մասնակցության ժամանակավոր դադարեցում.....	7
Կրթության արդյունավետության գնահատում	8



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ծրագրեր

Վկայական, դիպլոմ և մագիստրոսի աստիճան

ՀՎՀ ուսանողները կարող են յուրաքանչյուր ավարտած դասընթացից կուտակել կրեդիտներ՝ արդյունքում ստանալով վկայական, դիպլոմ և/կամ մագիստրոսի կոչում:

Վկայական

Վկայականը տրվում է ուսանողի պահանջով ցանկացած ֆակուլտետի որևէ դասընթացի մեկ մակարդակն ավարտելուց հետո:

Դիպլոմ

Դիպլոմ ստանալու համար անհրաժեշտ է կուտակել առնվազն 21 կրեդիտ: Ուսանողին տրվում է հիմնական մասնագիտական որակավորում, եթե մեկ ֆակուլտետում կուտակել է 18 կրեդիտ 21 հնարավորից: Ուսանողին տրվում է երկրորդական մասնագիտական որակավորում, եթե մեկ այլ ֆակուլտետում կուտակել է 12 կրեդիտ 21 հնարավորից:

Մագիստրոսի աստիճան

ՀՎՀ-ն իրականացնում է մագիստրոսական ծրագիր և շնորհում է լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության մագիստրոսի կոչում: Ծրագիրը երկու բաժինների համատեղ նախաձեռնությունն է: Այն ներառում է երկու բաժինների փորձը՝ ուսանողներին հնարավորություն տալով միջառարկայական տեսանկյունից ուսումնասիրել հայկական անցյալի և ներկայի լեզվաբանական, պատմական և մշակութային բնութագիրը: Ծրագիրը շնորհում է մագիստրոսի կոչում հետևյալ մասնագիտացումներով.

- Հայոց լեզու և պատմություն
- Հայոց լեզու և արվեստի պատմություն
- Հայոց լեզու և մշակույթ

Այս համատեղ ծրագրի շնորհիվ ուսանողները կարող են զարգացնել ինչպես իրենց գիտելիքները հայկական ժառանգության վերաբերյալ, այնպես էլ հայագիտական առարկաներին վերաբերող հարցերում հետազոտություններ կատարելու և գրավոր շարադրելու հմտությունները:

Ընդունելություն

Գիտական ցանկացած այլ ավանդական բնագավառի բակալավրի կոչում ունեցող ուսանողները կարող են շարունակել իրենց կրթությունը ՀՎՀ-ում՝ ստանալով մագիստրոսի կոչում:

Մագիստրոսական ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.



- համալսարանական դիպլոմների պատճենը,
- համալսարանական դիպլոմի միջուկի պատճենը,
- երկու երաշխավորագիր նամակ, որից առնվազն մեկը պետք է լինի դիմորդի սովորելու ունակություններին ծանոթ անձից:
- հիմնավորում 500 բառի սահմաններում՝ ներկայացնելով հայագիտության, միջմշակութային հաղորդակցության նկատմամբ իրենց հետաքրքրությունը, համապատասխան փորձը (ակադեմիական, մասնագիտական կամ/և անձնական), և իրենց հետագա մասնագիտական նպատակների իրականացման համար ՀՎՀ-ում ուսանելու ակնկալիքները:

Ընդունելության հետ կապված հարցերը պետք է ուղարկել academicdirector@avc-agbu.org էլ. հասցեով:

Կուրսային աշխատանքի և հետազոտության պահանջներ

Ծրագիրը բաղկացած է 2 մասից՝ կուրսային աշխատանք և հետազոտություն: Մագիստրոսի որակավորում ստանալու համար անհրաժեշտ է կուտակել 120 կրեդիտ համաձայն ստորև նշված կետերի.

Կուրսային աշխատանք. Խումբ Ա և Խումբ Բ դասընթացներ (72 կրեդիտ)

Այս կրեդիտներից առնվազն 48-ը պետք է լինեն Ա խմբի դասընթացներից, այսինքն՝ ուսանողների հիմնական մասնագիտական ոլորտից: Այն ուսանողները, ովքեր երկրորդական մասնագիտական որակավորման համար ընտրել են պատմություն կամ մշակույթ առարկաները, պետք է կուտակեն 24 կրեդիտ (Խումբ Բ դասընթացներ): Այդ կրեդիտները պետք է հավաքել որպես ուսանողի երկրորդական մասնագիտական որակավորում նշված բաժնից (առնվազն 18 կրեդիտ) և կամընտրական առարկաներից: Այն ուսանողները, ովքեր երկրորդական որակավորման համար ընտրել են արվեստի պատմություն առարկան, պետք է կուտակեն առնվազն 30 կրեդիտ Խումբ Բ դասընթացներից:

Դասընթացների ընտրությունը կախված է ուսանողի մասնագիտացումից: Ակադեմիական խորհրդատուն ուսանողներին կուղղորդի դասընթացների ընտրության հարցում:

Հետազոտություն. Խումբ Հ դասընթացներ և մագիստրոսական թեզ (48 կրեդիտ)

36 կրեդիտ պետք է կուտակել լաբորատոր/հետազոտական և դասախոսական ասիստենտության/օժանդակության, ինչպես նաև թեզի համար պահանջվող հետազոտական աշխատանքներից: Մագիստրոսական թեզը ապահովում է 12 կրեդիտ:

Բոլոր ուսանողները պետք է տարեկան առնվազն 160 ժամ տրամադրեն իրենց դասախոսների և դեկանարի հետ առկա խորհրդակցության համար՝ տեսակոնֆերանսների միջոցով կամ անմիջական ներկայությամբ:

Կրեդիտներ/ուսումնական ծրագիրը ըստ մասնագիտացման

Հայոց լեզու և պատմություն

Հայոց լեզվի դասընթացներ (արևելահայերեն կամ արևմտահայերեն) – 48 կրեդիտ (խումբ Ա)

Հայոց պատմություն (որպես երկրորդական մասնագիտական որակավորում՝ 18 կրեդիտ) և կամընտանական առարկաներ (6 կրեդիտ) - 24 կրեդիտ (խումբ Բ)

Հետազոտություն և մագիստրոսական թեզ – 48 կրեդիտ (խումբ Հ)

Հայոց լեզու և արվեստի պատմություն

ՀՎՀ-ի ակադեմիական քաղաքականություն և ընթացակարգեր

Այցելեք [ՀՎՀ կայք](#) փաստաթղթում առկա տեղեկատվության ամենավերջին տարբերակին ծանոթանալու համար:



Հայոց լեզվի դասընթացներ (արևելահայերեն կամ արևմտահայերեն) – 42 կրեդիտ (Խումբ Ա)
Հայկական մշակույթ (12 կրեդիտ), պատմություն (12 կրեդիտ) և կամընտրական առարկաներ (6 կրեդիտ): Պատմության դասընթացները պետք է առնչվեն այն պատմական ժամանակաշրջանին, որը ուսանողը ընտրել է իբրև հիմնական մասնագիտացում: 30 կրեդիտ (խումբ Բ):
Հետազոտություն և մագիստրոսական թեզ – 48 կրեդիտ (խումբ Հ)

Հայոց լեզու և մշակույթ

Հայոց լեզվի դասընթացներ (արևելահայերեն կամ արևմտահայերեն) – 42 կրեդիտ (խումբ Ա)
Հայկական մշակույթ (18 կրեդիտ) և կամընտրական առարկաներ (6 կրեդիտ) - 24 կրեդիտ (խումբ Բ)
Հետազոտություն և մագիստրոսական թեզ – 48 կրեդիտ (խումբ Հ)

Մագիստրոսի կոչում ստանալու համար ուսանողները պետք է ունենան առնվազն միջինը <լավ> (B) գնահատական կուրսային աշխատանքի և հետազոտության համար:

Մագիստրատուրա. խորհրդատվություն

Կրթական բաժնի տնօրենը հանդես է գալիս որպես մագիստրոսական ծրագրի խորհրդատու և պատրաստ է պատասխանել ծրագրի վերաբերյալ ուսանողների հարցերին, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն: Ուսանողների համար կնշանակվի նաև խորհրդատու՝ համաձայն իրենց հետաքրքրությունների և մասնագետ-դասախոսի առկայության: Խորհրդատուն պատասխանատու է, որ ուսանողը կատարի մագիստրոսական աստիճանը ապահովող ուսումնական պահանջները: Դասընթացները պետք է ընտրվեն խորհրդատուի հետ խորհրդակցելու արդյունքում: Ատենախոսության թեման պետք է հաստատվի քննական հանձնախմբի կողմից:

Մագիստրոսական ատենախոսություն

Մագիստրոսական ատենախոսությունը գրվում է ֆակուլտետի երկու անդամների ղեկավարության ներքո:

Մագիստրոսական աստիճան շնորհվում է դասընթացը և մագիստրոսական ատենախոսությունը հաջողությամբ համապատասխանաբար ավարտելու և պաշտպանելու դեպքում, ինչը ցույց կտա ուսանողի անկախ հետազոտություն անցկացնելու հմտությունը: Հետբուհական քննական կոմիտեն պետք է տեղյակ լինի, թե ինչ թեմա է ընտրել ուսանողը: Թեման պետք է ուսանողի հիմնական մասնագիտական ոլորտից լինի: Ատենախոսությունը չպետք է լինի պահանջված 40 էջից պակաս և պետք է համապատասխանի գիտական աշխատանքների չափանիշներին և սկզբունքներին:

Կրթաթոշակ մագիստրոսական ծրագրի դիմորդներին

Մագիստրոսական ծրագրի դիմորդները կարող են ստանալ կրթաթոշակ համաձայն [ՀՎՀ կրթաթոշակի քաղաքականության](#):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Գնահատականները նշանակվում են տառերով և հաշվարկվում ստորև բերված թվային արժեքներով.



Տար	Տոկոս	Գնահատման նիշ	Նկարագրություն	
Անցողիկ	A	95-100	4.0	Գերազանց – բարձր առաջադիմություն, նյութի գերազանց ընկալում
	A-	90-94	3.7	
	B+	87-89	3.3	Լավ – լավ առաջադիմություն, նյութի օրինակելի ընկալում
	B	84-86	3.0	
	B-	80-83	2.7	
	C+	77-79	2.3	Բավարար – նյութի բավարար ընկալում
	C	74-76	2.0	
C-	70-73	1.7		
D	60-69	1.0	Անցողիկ – նյութի նվազագույն ընկալում	
Անբավարար	F	0-59	0.0	Անբավարար – նյութի անբավարար ընկալում

Ակադեմիական ուսումնական շրջանի ընթացքում գնահատականներ ստանում են մասնակից ուսանողները: Եթե մասնակից ուսանողը մասնակցում է մեկից ավելի դասընթացների և/կամ մեկից ավելի ուսումնական շրջանների, ապա Գրանցման գրասենյակը պահպանում է ուսանողի միջին գնահատականը (GPA), որը հաշվարկվում է հետևյալ կերպ. (առարկայի ընդհանուր միավորներ x կրեդիտային ժամեր) / (կրեդիտային ժամերի գումար):

Ունկնդիր ուսանողները գնահատականներ չեն ստանում: Վերջիններս օնլայն ուսուցչի կողմից ներկայացված նվազագույն պահանջները կատարելու կամ չկատարելու դեպքում ստանում են «ստուգված» կամ «չստուգված»: Հավելյալ տեղեկությունների համար, այցելեք [Հավաստարմագրում](#) բաժինը:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՎՀՆՆԻ ակադեմիական կարգապահական քաղաքականությունը պահանջում է, որ բոլոր առաջադրանքները, հարցումները և քննությունները լինեն ուսանողի անձնական աշխատանքը: Ցանկացած այլ պարագայում այն կորակվի որպես ակադեմիական անկարգապահություն:

Խարեություն

- չի կարելի հաղորդակցվել/միմյանց հետ փոխանակել քննության պատասխանները քննության ընթացքում կամ, եթե, ելնելով ժամային գոտիների տարբերությունից, քննական օրերը տարբեր են
- չի կարելի առանց համաձայնության օգտագործել մեկ ուրիշի աշխատանքը կամ արտագրել
- չի կարելի քննություն հանձնել ուսանողի փոխարեն
- չի կարելի քննություն հանձնել մեկ այլ երրորդ անձի մոտ
- չի կարելի մեկ այլ ուսանողի աշխատանքը ներկայացնել որպես սեփական աշխատանք
- չի կարելի խմբային աշխատանքի ընթացքում հովանավորել պասիվ ուսանողին



Գրագողություն

- գողանալ և օգտագործել մեկ այլ ուսանողի մտքերը/բառերը
- օգտագործել մեկ ուրիշի ստեղծագործական աշխատանքն առանց բնօրինակին հղում կատարելու

Անհրաժեշտ է խստորեն պահպանել վերոնշյալ ակադեմիական կարգապահական նորմերը: Յուրաքանչյուր նմանատիպ դեպք կներկայացվի ՀՎՀ Ակադեմիական Խորհրդի քննարկմանը: Եթե որոշվի, որ ուսանողը թույլ է տվել կարգապահական նորմի խախտում, ապա վերջինս կհեռացվի ՀՎՀ-ից և կստանա XF ցուցիչը: Եթե պարզվի, որ ուսանողը ակադեմիական կարգապահական նորմի խախտման փորձ է կատարել, նա կզգուշացվի, իսկ նման վարքագծի շարունակականության դեպքում կհեռացվի ՀՎՀ-ից՝ կրկին ստանալով XF ցուցիչը: Եթե ուսանողը դիտարկյալ կամ գիտակցաբար օգնի մեկ այլ ուսանողին խախտել նշված կարգապահական նորմերից որևէ մեկը, ապա նա անձամբ կխախտի կարգը և, այդ կերպ, կստանա համապատասխան նկատողությունը: Եթե վստահ չեք, որ ինչ-որ գործողություն համարվում է ակադեմիական կարգապահական նորմի խախտում թե ոչ, ապա կարող եք խորհրդակցել Ձեր օնլայն ուսուցչի հետ:

ՈՒՇ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՎՀ յուրաքանչյուր ուսումնական շրջանի գրանցման ժամանակաշրջանը բաց է սահմանափակ ժամանակով: Այս ժամանակահատվածում բոլոր հետաքրքրված անձինք կարող են ներկայացնել մեկ կամ մի քանի դասընթացների մասնակցության հայտ:

Ուշ գրանցվելու կարգը

Ուշացած կարող է համարվել այն գրանցման հայտը, որը ստացվել է ուսումնական շրջանը սկսվելուց հետո երկու շաբաթվա ընթացքում: Վերոնշյալ հայտը կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե մեկ դասարանում ուսանողների թիվը առավելագույնը չի գերազանցում: Բոլոր դիմումները պետք է ուղարկել Գրանցման գրասենյակ հետևյալ հասցեով. registrar@avc-agbu.org: Եթե գրանցման Ձեր խնդրանքը ընդունվի, ապա ուսանողը պետք է կատարի բաց թողնված շաբաթվա առաջադրանքները՝ հետևելով օնլայն ուսուցչի կողմից սահմանված դասացուցակին:

Դասընթացից հրաժարվելու կարգը

Եթե ուսանողը մասնակցում է մեկից ավելի դասընթացների, այս դեպքում նա կարող է որոշում կայացնել հրաժարվել որևէ դասընթացից: Նա կարող է դասընթացից հրաժարվել Շաբաթ 0-ի և Շաբաթ 1-ի ընթացքում: Բոլոր դիմումները պետք է ուղարկել Գրանցման գրասենյակ հետևյալ հասցեով. registrar@avc-agbu.org:



Դասընթացից հրաժարվելու մասին բոլոր հայտերը, որոնք կներկայացվեն նշված ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան Շաբաթ 2-ի սկսվելուց հետո, կընդունվեն և ուսման վճարի 80%-ը կփոխհատուցվի:

Մասնակցությունն ամբողջապես դադարեցնելու կարգը

Մասնակցությունն ամբողջապես դադարեցնելու դեպքերն են, երբ

- ուսանողը մասնակցում է մեկից ավելի դասընթացների և ցանկանում է դադարեցնել իր մասնակցությունը դասընթացից հրաժարվելու համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո,
- ուսանողը մասնակցում է մեկ դասընթացի և ցանկանում է ուսումնական շրջանի ցանկացած հատվածում դադարեցնել իր մասնակցությունը:

Ուսման վճարի փոխհատուցում

Ուսման վճարի փոխհատուցումը կկատարվի ստորև նշված աղյուսակի համաձայն.

Օրացույց	Փոխհատուցման %
Շաբաթ 0-ի և Շաբաթ 1-ի ընթացքում	ուսման վճարի 80%-ի չափով փոխհատուցում
Շաբաթ 2-ի ընթացքում	ուսման վճարի 50%-ի չափով փոխհատուցում
Շաբաթ 3-ից հետո	Փոխհատուցում չի կատարվում

Մասնակցությունն ամբողջապես դադարեցնելու մասին դիմումները պետք է ներկայացնել Գրանցման գրասենյակ հետևյալ հասցեով. registrar@avc-agbu.org:

Ուսանողի կարգավիճակի փոփոխություն

Ուսանողը կարող է որոշել փոխել իր կարգավիճակը՝ մասնակցից ուսանողից դառնալ ունկնդիր կամ հակառակը: Կարգավիճակը փոխելու մասին դիմումները անհրաժեշտ է ներկայացնել ոչ ուշ, քան Շաբաթ 3-ի սկիզբը: Այն ուսանողները, ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցից ուսանողից դառնալ ունկնդիր, ուսման վճարի փոփոխություններ չեն ունենա: Այդուհանդերձ, հակառակ դեպքում վճարի փոփոխությունները կիրառելի են:

Կարգավիճակի փոփոխման վերաբերյալ բոլոր դիմումները պետք է ուղարկել Գրանցման գրասենյակ հետևյալ հասցեով. registrar@avc-agbu.org:

Դասընթացին մասնակցության ժամանակավոր դադարեցում

ՀՎՀ դասընթացները ինտերակտիվ են և ուսանողի կողմից ակտիվ մասնակցություն են պահանջում: Օնլայն ուսուցիչը կարող է ժամանակավորապես դադարեցնել ուսանողի մասնակցությունը հետևյալ պատճառներով.

- անհրաժեշտ մասնակցությունը չապահովելու և առաջադրանքները չկատարելու դեպքում
- ՀՎՀ ակադեմիական կարգապահության նորմերը չհարգելու դեպքում:



Ծանոթագրություն. Եթե ուսանողի պասիվությունը հիվանդության կամ այլ օրինական խնդրի պատճառով է, ապա անհրաժեշտ է անմիջապես այդ մասին տեղեկացնել Ձեր օնլայն ուսուցչին, որպեսզի ժամանակավորապես չդադարեցվի դասընթացին Ձեր մասնակցությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՎՀ-ի մոտեցումը բացառապես հիմնված է ոչ թե տեխնոլոգիաների, այլ օնլայն ուսուցման սկզբունքի վրա: Հետևաբար կրթական և վարչարարական ռազմավարությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով ուսանողների պահանջները, հարցադրումները, ինչպես նաև նրանց ունեցած փորձը:

Այս մոտեցման հիմքում ընկած երկու կարևորագույն սկզբունքներն են.

1. ուսուցման բարձր որակը, որի չափորոշիչներն են.
 - ա. առաջարկվող դասընթացների բովանդակությունը,
 - բ. արդյունավետ տեխնոլոգիաների և տեխնիկական հնարավորությունների կիրառումը,
 - գ. Մանկավարժական/մեթոդոլոգիական արդյունավետությունը:
2. կրթության բարձր որակը, որը ենթադրում է.
 - ա. ուսանողներին գիտելիքների փոխանցում ուսումնական ծրագրի և առարկաների համաձայն,
 - բ. ծրագրի նպատակների և ուսման արդյունքների համապատասխանում:

Այս նպատակների իրագործման համար ՀՎՀ-ի կրթության որակի և արդյունավետության գնահատման կենտրոնը իրականացնում է ուսանողների միջանկյալ և ավարտական հարցումներ, որոնց արդյունքները ներկայացնում է ՀՎՀ նախագահին: Կենտրոնը միևնույն ժամանակ ներկայացնում է ծրագրի կատարելագործմանն ու զարգացմանն ուղղված համապատասխան առաջարկներ:

Ի լրացումն կենտրոնի ներկայացրած առաջարկների ՀՎՀ նախագահը հարցումների արդյունքները տրամադրում է ՀՎՀ Գործադիր և Ակադեմիական խորհուրդներին, վերահսկում է Կենտրոնի և վերընշված երկու խորհուրդների կողմից ստացված առաջարկների իրականացման գործընթացը: Վերջինիս համար պատասխանատու են Կրթական կենտրոնը (1-ին կետի գ. ենթակետ, 2-րդ կետի ա և բ ենթակետեր) և Զարգացման կենտրոնը (1-ին կետի ա և բ ենթակետեր, 2-րդ կետի ա ենթակետ):